ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ՏԵՍԱՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

ԱԼԵՆ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Մարդկության պատմության տարբեր փուլերում ազգային պետության անվտանգությունը ենթարկվել է իմաստային և ծավալային տարբեր փոփոխությունների: Այդ ընթացքում վերացվել են ինչպես անվտանգության ապահովման միջոցներն ու մեխանիզմները, այնպես էլ վերաիմաստավորվել կամ առաջացել են նոր ոլորտներ: Այսօր ազգային անվտանգությունը ձեռք է բերել առավել լայն իմաստային մեկնաբանություն: Եթե Երկրորդ աշխարհամարտից առաջ և դրանից հետո՝ սառը պատերազմի տարիներին, ազգային անվտանգությունը մեկնաբանվում էր առավելապես ռազմական ոլորտի միջակայքում, ապա այսօր դրա կարևոր ու անքակտելի տարբեր են համարվում նաև անհատը, հանրային անվտանգությունը, անվտանգության տեղեկատվական բաղադրիչները: Այսօր անվտանգության ոլորտները դարձել են էլ ավելի փոխկապակցված և իրենց փոխհարաբերակցությամբ ունեն ավելի շատ ցանցային, քան հիերարխիկ կառուցվածք: Սա իր հերթին փաստում է, որ այդ համակարգի օղակներից ընդամենը մեկի տկարությունը կամ խոցելիությունը բացասական ազդեցություն կունենա ամբողջ համակարգի բնականոն գործունեության վրա: Հետևաբար, եթե նախկինում անվտանգության ապահովումը ենթադրում էր սպառնալիքների ու վտանգների հակադարձում, ապա այսօր անվտանգության ապահովումն առաջին հերթին անվտանգային ռիսկերի պայմանների կանխարգելումն է, վերացումն ու կառավարումը: Անվտանգության նոր փիլիսոփայության պայմաններում, կարևորելով ռիսկերի դերն ու նշանակությունը, փաստենք, որ այն ուղղակիորեն կապված է երկու՝ «անվտանգություն» և «սպառնալիք» հասկացությունների հետ: Ուստի մինչ բուն ռիսկերի տեսահայեցակարգային մեկնաբանության անցնելը փորձենք համառոտ դիտարկել վերոնշյալ երկու եզրույթների մեկնաբանման մի քանի հիմնական մոտեցումներ:

Անվտանգության և հատկապես ազգային անվտանգության մեկնաբանության միասնական մոտեցումներ գոյություն չունեն: Եթե ռեալիստները (Հ. Մորգենթաու և այլք) ձգտում էին անվտանգությունը տեսնել որպես ուժի ածանցյալ, որի պայմաններում գործող սուբյեկտը, գերազանցություն ձեռք բերելով մյուսների նկատմամբ,

կհայտնվեր անվտանգության վիճակում[1], ապա նեոռեալիստները (Ք. Ուոլթս և այլք) անվտանգային վարքը պայմանավորում էին համաշխարհային քաղաքականության մեջ «համակարգ»-ի զարգացմամբ՝ առաջնայնություն տալով պետությունների միջազգային քաղաքական վարքի այնպիսի դրսևորման, ինչպիսին ուժերի հավասարակշռությունն է: Եթե լիբերալներն անվտանգության ապահովման մեջ շեշտում էին միջազգային ինստիտուտների կարևորությունը, որը կօժանդակի կառավարությունների միջև փոխկապակցված շահեկան քաղաքականության համակարգմանը, իսկ առևտուրը կհանգեցնի խաղաղության, ապա նեոլիբերալները կարծում էին, որ պետությունների՝ համագործակցելու կարողությունը բացառապես կախված է միջազգային ինստիտուտներից և նրանց պետք է տալ առաջնահերթ դերակատարում հանրային կենսագործունեության բոլոր ոլորտներում:

Անվտանգության հետազոտման Կոպենհագենյան դպրոցի հեղինակավոր ներկայացուցիչներ Օ. Ուևերը և Բ. Բուզանը համարում են, որ անվտանգայնացումը բաղկացած է 3 քայլերից.

1. գոյություն ունեցող սպառնալիքների բացահայտում,
2. արտակարգ միջոցառումների իրականացում,
3. բացասական հետևանքների նվազեցում, կրկնման հավանականության բացառում[2]: Ըստ անվտանգության հետազոտությունների Ուելյան դպրոցի՝ անվտանգության ռեալիստական ըմբռնումը, որ մեկնաբանվում է **իշխանություն** և **կարգ** հասկացություններով, երբեք չի հանգեցնում իրական, երկարաժամկետ անվտանգության: Անվտանգության ռեալիստական ընկալումը «խաղ զրոյական արդյունքով բանաձևն» է, որը Ուելյան դպրոցի համար անընդունելի է: Ըստ դպրոցի կողմնակիցների՝ անվտանգությունը լիարժեք է այն պայմաններում, երբ դրա կողմ հանդիսացող օղակներն ունեն անվտանգային կարիքների բավարարված որոշակի վիճակ, որի պարագայում գերակայություն չի տրվում կողմերից մեկի շահերին[3]:

Անդրադառնալով անվտանգության մեկնաբանման ընդհանուր մոտեցումներին՝ նշենք, որ դրանք կարելի է բաժանել երկու՝ նեգատիվիստական և պոզիտիվիստական խմբերի: Առաջինը կենտրոնանում է սպառնալիքների բացահայտման և բռնության կիրառման վրա, որն իր հերթին ազդում է անվտանգության ընկալման և իրականացման վրա: Երկրորդ՝ պոզիտիվիստական մոտեցման ելակետն այլ է. այն ենթադրում

---

[1] Տե՛ս **Buzan B.**, People, states and fear: the national security problem in international relations, Brighton, Sussex: Wheatsheaf, 1983, էջ 19:

[2] Տե՛ս **Buzan B.**, **Waver O.**, **Wilde J.** Security: A new framework for analysis. London 1998. // Security studies Security studies: A reader. Ed. By Christopher W. Hughes, Lai New Meng., New York, 2011, էջ 18:

[3] Տե՛ս **Floyd R.**, Towards a consequantialist evaluation of security: bringing together the Copenhagen and the Welsh schools of security studies. Review of international studies. Volume 33, Issue 02, 2007, էջ 39:

է, որ անվտանգությունը բաղկացած չէ միայն վախից, այլ հիմնվում է զարգացման, ստեղծագործական մոտեցման, նոր հնարավորությունների գործարկման վրա: Անհատները և հանրույթները այստեղ դիտարկվում են որպես անվտանգության գործող դերակատարներ, որոնք ձգտում են անվտանգություն ապահովել ոչ միայն և ոչ այնքան սպառնալիքներից խուսափելով, այլ նորը կառուցելու սեփական կարողությամբ: Սպառնալիքներից խուսափելու և հնարավորություններ ստեղծելու միջոցների մի մասը բռնի և ուժային չէ և ներառում է հումանիտար և զարգացմանն ուղղված օժանդակություն՝ տնտեսական, կրթական, բնապահպանական և այլ բնույթի աջակցություններ[4]:

Անդրադառնալով «ռիսկ» հասկացության բովանդակությունը բացահայտող մեկ այլ կարևոր եզրույթի՝ «սպառնալիք»-ին՝ նշենք, որ այն մասնագիտական շրջանակներում նույնպես միանշանակ չի ընկալվում: Գիտական գրականության մեջ սպառնալիքը հետազոտել են ամենատարբեր դիրքերից, ուստի մենք կփորձենք դիտարկել նրա մեկնաբանման առավել համընդգրկուն մոտեցումները, որոնք առնչվում են հետազոտվող «անվտանգային ռիսկ» եզրույթին: Օրինակ՝ ռիսկերի հայտնի տեսաբան Կառլ Յանգը սպառնալիքը դիտարկում է լայն և նեղ դիրքերից: Ըստ հեղինակի՝ «Նեղ առումով այն վնասող ազդեցություն կամ գործողություն է: Լայն առումով՝ սպառնալիքը ցանկացած այն երևույթն է, որը վնաս, կորուստ, իրավիճակի վատթարացում պատճառելու հնարավորություն ունի»[5]: Մեկ այլ տեսաբան՝ Ք. Դաասը, կարծում է, որ սպառնալիքների գոյության մասին պետք է խոսել, եթե կա առնվազն երեք նախապայման.

1. հակադիր շահերի կրող սուբյեկտ-պետություն,

2. սուբյեկտը ծրագրում կամ իրականացնում է հակադիր գործողություն, հարձակում,

3. հակադիր շահերի կրող սուբյեկտ-պետությունը տիրապետում է կորուստ պատճառելու համար անհրաժեշտ զգալի միջոցների[6]:

Ըստ ռազմավարական անվտանգության տեսաբան Կ. Հ. Վելլանիի՝ «սպառնալիքը որևէ գործողության հնարավորություն է, որի պայմաններում հնարավոր հակառակորդը, օգտվելով հակառակ կողմի խոցելի վիճակից, կանխամտածված կամ պատահականորեն վնասում է նրան»[7]: Ըստ նրա՝ բանաձևային ձևակերպմամբ սպառնալիքը հավասար է մտադրության, կարողության և շարժառիթի հանրագումարին[8]:

Հստակեցնելով «անվտանգություն» և «սպառնալիք» եզրույթների

---

[4] Տե՛ս **Hoogensen G.** Security by any other name: negative security, positive security and a multi-actor security approach. Review of international studies. Volume 38. Issue 04, October 2012, էջ 836-843:

[5] **Young C.** Metrics and methods for security risk management. Elsevier inc 2010, p. 20.

[6] Տե՛ս **Daase C.** International risks and the perlis of proactive security policy. (Paper prepared for the six pan-european International Relation Conference) Turin, 12-15 September, 2007:

[7] **Vellani K. H.** Strategic security management: A risk assessment guide for decision makers. Butterworth-Heinemenn, 2006, p. 28.

[8] Տե՛ս նույն տեղը, էջ 30:

մեկնաբանման մոտեցումները՝ անդրադառնանք դրանց բովանդակային տիրույթում գործառող «ռիսկ» հասկացության մեկնաբանմանը, որը պատշաճ խորությամբ ուսումնասիրվել և լայնորեն կիրառվում է տնտեսագիտության, տեխնիկական գիտություններում, մինչդեռ քաղաքական գիտությունների ոլորտում այն դեռևս զարգացման փուլում է: Թեև անվտանգային ռիսկերի ուսումնասիրությունը հարուստ է մեթոդական հենքով, սակայն տեսական մշակումները ոչ միայն սակավ են, այլև երբեմն հակասական: Արձանագրենք, որ շատ երկրների, այդ թվում ՀՀ-ի անվտանգության քաղաքականության հիմքային փաստաթղթերում ռիսկերին վերաբերող վերլուծություններ առհասարակ բացակայում են, մինչդեռ սպառնալիքներին, վտանգներին նվիրված ուսումնասիրությունները բավականին ընդգրկուն են: Ի տարբերություն մեզ՝ արևմտյան շատ պետությունների ու միջազգային կազմակերպությունների գործունեության մեջ ռիսկերի կանխարգելման, հետազոտման ու դրանց հիմքով կանխատեսման գործիքակազմը ոչ միայն շատ տարածված է, այլև համարվում է բնականոն, տրամաբանական:

Այս համատեքստում փորձենք անդրադառնալ ռիսկերի տեսահայեցակարգային վերլուծությանը՝ հիմնվելով մի շարք հեղինակավոր տեսաբանների մոտեցումների վրա: Անվտանգային ռիսկերի հետազոտող Կ. Յանգը համարում է, որ «բոլոր սպառնալիքները բնորոշվում են համընդհանուր՝ «ռիսկ» եզրույթով: Չնայած սպառնալիքի և ռիսկի փոխկապակցվածությանը՝ դրանք նույնական եզրույթներ չեն: Սպառնալիքի պայմաններում ռիսկեր նույնպես չկան»[9]: Կ. Յանգը առաջարկում է ռիսկը չափել երեք՝ խոցելիության, ազդեցության և հավանականության բաղադրիչների գնահատմամբ, որոնց ամբողջականությունը նա սահմանում է որպես սպառնալիք: Ըստ նրա՝ իրավիճակը կարող է բնորոշվել որպես «սպառնալիք», երբ նշված երեք տարրերը միաժամանակ առկա են, իսկ նրանց քանակական կամ որակական արժեքը բարձր է:

Ըստ Կ. Հ. Վելլանիի՝ «ռիսկը սպառնալիքի և խոցելիության գործառույթն է: Այն օբյեկտի խոցելիության պայմաններում հնարավոր սպառնալիքի ազդեցությամբ նրա (օբյեկտի) կարողությունների կորստի կամ ոչնչացման հնարավորությունն է»[10]: Հեղինակն իր մոտեցումը ներկայացնում է կարողության, խոցելիության, սպառնալիքի հարաբերակցության մեջ:

Ի տարբերություն նախորդ տեսաբանների՝ ռիսկերի մեկ այլ հետազոտողի՝ Ջ. Կոպասի կարծիքով՝ ռիսկի հիմնական բնորոշիչը անորոշությունն է: Եթե գործողության հետևանքները կամ որոշումները կախված են որոշակի իրադարձության հնարավոր առաջացումից, ապա նման գործողությունները բնորոշվում են որպես ռիսկային, քանզի մենք կանխավ չենք կարող արձանագրել, թե նշյալ իրադարձություն-

[9] **Young C.,** նշվ. աշխ., էջ 20:
[10] **Vellani K. H.**, նշվ. աշխ., էջ 14:

ները տեղի կունենան, թե ոչ: Հետևաբար այս համատեքստում գործողությունների վերաբերյալ ցանկացած դիտարկում առաջնահերթ պետք է ամրագրի անորոշության բաղադրիչը[11]: Մեկ այլ հետազոտող՝ Թ. Էվենը, անդրադառնալով անորոշության պայմաններում որոշում կայացնելու հիմնահարցին, նշում է, որ նախ՝ պետք է ուսումնասիրել հնարավոր, այլ ոչ ձևային գործողության հավանականությունը և կանխատեսումները, ապա, հաշվի առնելով, որ հավանականությունն անորոշության չափման գործիքն է, նկատի առնել նաև այդ մասով առկա վիճակագրական տվյալները[12]: Ըստ ռիսկերի տեսաբան Ու. Լորանսի՝ ռիսկը «ոչ ցանկալի արդյունքների հավանականության և դրանց հնարավոր վնասի չափի որոշումն ու կանխատեսումն»[13] է: Այսինքն, ըստ Լորանսի, ռիսկի բնորոշման մեջ պետք է արձանագրվեն ոչ միայն անցանկալի արդյունքի իրականացման հավանականությունը, այլ նաև դրա բացասական անդրադարձի, խոցելիության չափը, ծավալը:

Ռիսկերի հետազոտմամբ զբաղվող մեկ այլ տեսաբան Ս. Օ. Հանսոնը, իր «Ռիսկերի յոթ առասպելներ» հետազոտության մեջ ուշադրությունը կենտրոնացնում է ռիսկերի մի քանի բնութագրիչների վրա, որոնց ներքո ռիսկը բնորոշում է որպես՝

- ոչ ցանկալի իրադարձություն, որը կարող է տեղի ունենալ կամ ոչ,
- ոչ ցանկալի իրադարձության հնարավոր բացասական ազդեցություն, որ կարող է իրողություն դառնալ կամ ոչ,
- ոչ ցանկալի իրադարձության իրականություն դառնալու հավանականություն՝ հաշվի առնելով նման բնույթի նախկին իրավիճակների վերաբերյալ առկա տվյալները,
- ոչ ցանկալի իրադարձությունների անկանխատեսելի բացասական գործընթացների խոցելիության չափի կանխատեսում[14]:

Ռիսկերի վերաբերյալ հեղինակների ներկայացված մոտեցումներից եզրակացնում ենք, որ ռիսկերի չափումը իրականացվում է առկա կամ հնարավոր վտանգների կանխատեսման, հավանականության աստիճանը և հնարավոր վնաս հասցնելու չափը որոշելու համար: Սակայն ռիսկերի չափումը կարող է իրականացվել ոչ միայն վտանգների սպասելիքների կանխատեսում կատարելիս, այլև պետական քաղաքականություն մշակելիս, այն իրացնելիս: Օրինակ՝ արտաքին և անվտանգային քաղաքականություն մշակելիս հնարավոր է կիրառել ռիսկերի գնահատման գործիքակազմը: Այս պարագայում կարելի է

---

[11] Տե՛ս **Copas J.**, Statistical modeling for risk assessment. Risk management. Vol. 1, № 1, 1999, էջ 35:

[12] Տե՛ս **Aven T.**, On how to approach risk and uncertainty to support decision making, Risk management, Vol. 6, № 4, 2004, էջ 27-28:

[13] **Lowrance WW**. Of acceptable Risk. Los Altos, CA: William Kaufman, 1976 // Yacow Haimes, On the complex definition of risk: A systems-based approach. Risk analysis, Vol 29, № 12, 2009, p. 1647.

[14] Տե՛ս **Hansson S. O.**, Seven myths of risk/ Risk management, Vol 7, № 2, 2005, էջ 7:

չափել պետության անվտանգային համակարգն այն սկզբունքներով, որոնցով ռիսկերն են չափվում. այսինքն՝ փորձել գտնել քաղաքականության խոցելի կետերը, չափել, թե որքան է հավանականությունը, որ քաղաքականությունը կունենա ցանկալի արդյունքներ, և վերջապես՝ չափել ու կանխատեսել, թե ինչպիսին կարող է լինել այդ ազդեցությունը կամ ինչ հետևանքներ կունենա: Հենց այս առումով հատկապես կարևոր է հստակեցնել ռիսկերի և անվտանգային ռիսկերի չափման մեթոդաբանությունը, դրա հիմնական բաղադրիչները: Այսինքն՝ խոսելով ռիսկերի մասին առհասարակ՝ պետք է նշենք, որ դրանք անվտանգության համար իրական կամ հնարավոր սպառնալիքների ի հայտ գալու հավանականություններ են: Փաստորեն, պետության անվտանգության սպառնալիքը գործողության մեջ գտնվող ռիսկն է:

Ներկայացնելով «ռիսկ» հասկացության բնորոշման ընդհանուր մոտեցումները՝ կարծում ենք՝ կարևոր է նաև վեր հանել նրա չափման մեթոդաբանական բանաձևումները, որոնք հնարավորություն կտան որոշելու ռիսկի աստիճանը, գործնականում դա տեղայնացնելու անվտանգային ռիսկերի համակարգի վրա՝ այդ կերպ կանխարգելիչ քայլեր ձեռնարկելով ենթադրելի սպառնալիքներին հակադարձելու ուղղությամբ: Նշենք, որ անվտանգային ռիսկերի չափման միասնական և լիարժեք մեթոդաբանություն գոյություն չունի, քանզի հնարավոր չէ չափման մեկ համընդգրկուն մեթոդաբանություն մշակել անվտանգության բազմաոլորտ համակարգի համար: Սակայն հավելենք, որ հիմքային առումով անվտանգային ռիսկերի ոլորտում ընդհանուր կիրառման որոշակի բանաձևեր իհարկե գոյություն ունեն: Այս առումով փորձենք ներկայացնել ռիսկերին, հետազոտող Կ. Յանգի մոտեցումն անվտանգային ռիսկերի բաղադրիչների վերաբերյալ, որոնք նա բաժանում է երեք բաղադրիչների՝ սպառնալիքի առաջացման հավանականություն, սպառնալիքի ի հայտ գալու դեպքում օբյեկտի խոցելիություն, օբյեկտի վրա սպառնալիքի առաջացման ազդեցություն: Յանգն այս փոփոխականները տեղադրում է իր առաջարկած բանաձևում, որն ունի հետևյալ պատկերը՝ անվտանգային ռիսկ = հավանականություն × խոցելիություն × ազդեցություն[15]: Կ. Վելլանին առաջարկում է ռիսկերի չափման իր մոտեցումը, որտեղ ռիսկը = սպառնալիք + խոցելիություն[16]:

Փաստենք, որ ռիսկերի չափումն անվտանգային գործընթացում շարունակական երևույթ է և նշանակում է, որ ոլորտի մասնագետները պետք է անընդհատ զբաղվեն գոյություն ունեցող և հնարավոր ռիսկերի մշտադիտակմամբ՝ արձանագրելու կամ հերքելու դրական կամ բացասական այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում անվտանգային գործընթացներում: Հարկ է, սակայն, նշել, որ անվտանգային ռիսկերն իրենց հերթին կազմված են մի շարք ոլորտային բաղադրիչներից,

[15] Տե՛ս **Young C.,** նշվ. աշխ., էջ 6:
[16] Տե՛ս **Vellani K. H.,** նշվ. աշխ., էջ 110:

որոնք բարդ, տարբեր ցուցիչներ ամփոփող համակարգեր են: Մեր կարծիքով, այդ բաղադրիչներից առանցքայինը քաղաքական ռսկերի համակարգն է, որն ամփոփում է պետության գոյության ու անվտանգության օրակարգի ինչպես օպերատիվ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարները: Այս համատեքստում առավել հստակ պատկերացնելու համար անվտանգային ռիսկերի համակարգը պետք է ներկայացնենք նրա քաղաքական բաղադրիչի կառուցվածքը, որի միջոցով այն անդրադառնում է անվտանգային ռիսկերի առկա վիճակի վրա:

Նշենք, որ մասնագիտական գրականության մեջ քաղաքական ռիսկերի գնահատման տարբեր մեթոդաբանություններ կան, որոնցից առավել հայտնի են երկուսը՝ «Գործարար միջավայրի ռիսկի ինդեքս»[17] և «Պետությունների ռիսկի գնահատման մեթոդաբանությունը»[18]: Պետության անվտանգային ռիսկի գնահատման մեջ քաղաքական փոփոխությունները արտահայտվում են քաղաքական ինդեքսներով, որը «Գործարար միջավայրի ռիսկի ինդեքսի» մեթոդաբանության միայն մի մասն է: Քաղաքական ռիսկի ինդեքսի որոշման պարագայում մասնագիտական հետազոտություններում կիրառվում է 10 ցուցիչներից կազմված սանդղակ, որոնք որոշում են կոնկրետ պետությունում քաղաքական կայունության սպառնալիքի աստիճանը: Այդ ցուցիչների մեջ են մտնում քաղաքական ռիսկերը պայմանավորող ներքին և արտաքին գործոնները: Ներքին գործոններից են քաղաքական համակարգի կառուցվածքային բազմազանության մակարդակը, էթնիկ, լեզվական կամ կրոնական պլյուրալիզմը, իշխանության պահպանմանն ուղղված հարկադրանքի գործիքակազմը, ազգային/հանրային մենթալիտետը՝ ներառյալ ազգային խտրականության, ազգայնամոլության, կոռուպցիայի նկատմամբ վերաբերմունքը, կենսական հարցերում զիջումներ անելու պատրաստակամությունը, սոցիալական պայմաններ՝ ներառյալ բնակչության խտությունը և եկամուտների բաշխումը, ձախ ծայրահեղական ուժերի ազդեցության չափը: Մինչդեռ արտաքին գործոնները կազմված են երկու բաղադրիչից՝ արտաքին կախվածությունը, հակառակորդ երկրների կողմից թշնամական վերաբերմունքի աստիճանը և տարածաշրջանային քաղաքական ուժերի հավասարակշռության վիճակը:

Մեկ այլ՝ «պետությունների ռիսկի գնահատման մեթոդաբանությամբ» քաղաքական ռիսկերը գնահատվում են խմբային և անհատական մի շարք ցուցանիշներով (տե՛ս աղյուսակը):

---

[17] Տե՛ս Business Environment Rankings, Which country is best to do business in?, From The Economist Intelligence Unit, https://www.iberglobal.com/files/business_climate_eiu.pdf

[18] Տե՛ս **Coleman M. E.**, Qualitative and quantitative risk assessment https://www.researchgate.net/publication /222478373_Qualitative_and_quantitative_risk_assessment

Աղյուսակ

Ցուցանիշի տեսակ	Բաղադրիչներ
1.Կառավարման կայունություն	• կառավարման համախմբվածություն, • օրենսդրական կարողություններ, • հանրային աջակցություն
2.Սոցիալ-տնտեսական ցուցիչներ	• գործազրկության մակարդակ, • սպառողների վստահություն, • աղքատության աստիճան
3.Ներդրումային իրավիճակ	• պայմանագրային բազայի կենսունակություն, • աշխատավարձերի, կենսաթոշակների և նպաստային վճարումների ուշացումներ
4.Ներքին հակամարտություններ	• քաղաքացիական պատերազմ/հեղաշրջում, • ահաբեկչություն և քաղաքական բռնություններ, • քաղաքացիական անկարգություններ
5.Արտաքին հակամարտություններ	• պատերազմ, • միջսահմանային հակամարտություններ, • արտաքին ճնշումներ
6.Կոռուպցիա	
7.Ռազմական գործիչների ներգրավվածությունը քաղաքականության մեջ	
8.Կրոնական լարվածություն	
9.Օրենքների և իրավունքի/կարգի պահպանում	
10.Էթնիկ և միջէթնիկ լարվածություն	
11.Դեմոկրատական հաշվետվողականություն	

Վերոնշյալ երկու մեթոդաբանություններն էլ ենթադրում են պետության՝ ամենատարբեր ցուցիչներով հետազոտություն՝ կապված նրա անվտանգային ռիսկերի վերհանման հետ[19], որոնք կիրառական դեր ունեն պետության արտաքին ու անվտանգության քաղաքականության մշակման գործընթացներում ոչ թե արձագանքման, այլ կանխարգելման և կանխատեսման առումով:

[19] Հարկ է նշել, որ քաղաքական ռիսկերի ներկայացված մեթոդաբանությունից զատ, առկա է նաև տնտեսական ռիսկերի գնահատման մեթոդաբանություն, որը սոցիալ-տնտեսական ինդեքսների գնահատման հիմքով վեր է հանում պետության անվտանգային ռիսկերը պայմանավորող իրողությունները:

Ամփոփելով անվտանգային ռիսկերի հիմնահարցի տեսամեթոդական առանձնահատկությունների քննությունը՝ արձանագրենք, որ ռիսկերի կանխարգելման ու կանխատեսման գործիքակազմի ներառումը անվտանգության ոլորտ և դրանց չափորոշիչների հիմքով սպառնալիքների վերհանումը, կանխատեսումը և պետության անվտանգության դիրքերից դրանց նկատմամբ կանխարգելիչ քայլերի ձեռնարկումը շոշափելիորեն կմեծացնեն ինչպես ձեռնարկված գործողությունների արդյունավետությունը, այնպես էլ դրանց վրա հնարավոր ծախսվելիք ռեսուրսների ծավալը: Այս առումով անվտանգային ռիսկերի պարբերական ու անընդհատ մշտադիտարկումը հնարավորություն կտա առկա ցուցիչների հիմքով վերլուծելու տեղեկատվությունը անվտանգային ռիսկերի որոշման մեթոդաբանությունների միջոցով՝ այդ կերպ շոշփելիորեն բարձրացնելով պետության անվտանգության քաղաքականության արդյունավետության ցուցիչները:

Բանալի բառեր – *անվտանգություն, սպառնալիք, ռիսկ, անվտանգային ռիսկ, ռիսկերի չափման մեթոդաբանություն*

АЛЕН ГЕВОНДЯН – ***Теоретическое концептуальное определение рисков безопасности в профессиональном дискурсе.*** – В статье представлены различные аспекты теоретического концептуального анализа рисков. Принимая во внимание, что риск сложная и системная категория, он анализируется в соотнесении с категориями «безопасность» и «угроза».

В статье разобраны основные характеристики риска, в том числе риск безопасности, его особенности и определения, а также те индексы, используя которые, можно оценить влияние рисков на политику безопасности государства.

Ключевые слова: *безопасность, угроза, риск, риск безопасности, методы измерения рисков*

ALEN GHEVONDYAN – ***Theoretical and Conceptual Definition of Security Risks in Professional Discourse.*** – The article observes different aspects of the notion of “risk” from theoretical and conceptual perspectives. Taking into consideration the comprehensive and institutional nature of the notion “risk”, we analyze it in the context of interaction with the notions of “security” and “threat”. The article explains the general concepts of “risk” and “security risk”, their peculiarities and definitions, as well as the main indicators which allow us to measure their impact on the State security policy.

Key Words: *security, threat, risk, security risk, risk measurement methodology*

Ներկայացվել է՝ 10.03.2020, Գրախոսվել է՝ 22.04.2020, Ընդունվել է տպագրության՝ 24.07.2020